ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՅՕԲԵԼԵԱՆԸ

—

«Մշակի» № 208-ում տպված Հ. Առաքելեանի զեկուցումից, որ նա արել է Թիֆլիսի յօբելեանական մասնաժողովի նիստում, յայտնի է, որ մասնաժողովը դեռ այս տարվայ մարտի 11-ին որոշել էր, ի թիւս այլոց, իբրև յաւերժացումն համազգային յօբելեանի, հրատարակել տալ Պարիզի Արևելեան Լեզուների Դպրոցի պրոֆեսոր Ֆ. Մակլէրի ձեռքով Էջմիածնի փղոսկրեայ աւետարանի լուսատիպ վերարտադրութիւնը, ֆոտոտիպով, որպէսի հրատարակութեան համար պահանջվում է 10,000 ֆրանկ ծախս։

Իր ժամանակին մասնաժողովի նախագահ Հ. Առաքելեան դիմել էր Պետերբուրգ պ. Միքայէլ Պապաջանեանին և խնդրել գտնել մի մեկենաս, որ հոգար այդ ծախքը։

Այժմ մեզ հաղորդում են, որ, պ. Պապաջանեանի դիմումի հիման վրա, պ. Լևոն Մանթաշեան յանձնել է նրան 10,000 ֆրանկ, յիշեալ հրատարակութեան ծախքի համար։

Հետևաբար, Էջմիածնի նշանաւոր Աւետարանի ֆոտոտիպ հրատարակութիւնը, հսկողութեամբ պրոֆ. Ֆ. Մակլէրի, պէտք է շուտով լոյս տեսնի Պարիզում, իբրև ֆրանսիական ակադեմիայի հրատարակութիւն, կարևոր լուսաբանութիւններով։